Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ԷՄԻԼ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻՆ «Ս. ՍԱՀԱԿ - Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՁԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ԷՄԻԼ ԳԱԲՐԻԵԼԵԱՆ ՈՐ ՅԵՐԵՒԱՆ

Գոհութեան աղօթքով առ Աստուած, որ պարգեւում է մեր ժողովրդին գիտութեամբ անուանի, ազնիւ ծառայութեամբ նուիրեալ զաւակներ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից բերում ենք Ձեզ, սիրելի պրն Գաբրիելեան, Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքները:

Ճանաչում ենք Ձեզ անձնապէս եւ ծանօթ ենք Ձեր երկարամեայ գործունէութեանը, որ պատիւ է բերում Ձեր անունը՝ որպէս ազգանուէր հայորդի, արժանաւոր գիտնական ու մտաւորական:

Երկար տարիներ Դուք ծառայեցիք Երեւանի Մ. Հերացու անուան պետական բժշկական համալսարանում՝ որպէս դասախօս, ապայ ռեկտոր՝ հոգու ողջ նուիրումով Ձեր կարելին ի սպաս դնելով բժիշկների նոր սերնդի պատրաստութեան շնորհակալ առաքելութեանը: Ձեր գործունէութիւնը արդիւնաշատ եղաւ նաեւ Հայաստանի Առողջապահութեան նախարարի եւ ՀՀ գիտութիւնների ազգային ակադեմիայի Բնական գիտութիւնների բաժանմունքի քարտուղարի պաշտօններում, ուր տասնամեակների նախանձախնդիր ծառայութեամբ դրսեւորեցիք Ձեր սէրը առ Հայրենիքն ու ժողովուրդը եւ անկեղծ նուիրումը՝ հանդէպ առողջապահութիւնն ու գիտութիւնը: Ուրախ ենք, որ Ձեր գործունէութիւնը նոյն արգասաւորութեամբ շարունակում էք այսօր՝ որպէս Դեղերի եւ բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոնի տնօրէն, բարի աւանդ բերելով մեր երկրում առողջապահութեան բնագաւառի զարգացմանը:

Մեծարգոյ պրն Գաբրիելեան, Հայրենիքում եւ մեր երկրի սահմաններից դուրս Դուք ճանաչուած էք նաեւ Ձեր գիտական հարուստ վաստակով: Համաշխարհային գիտական շրջանակներում Ձեր բարձր հեղինակութեան վկայութիւններն են Ձեզ շնորհուած հայրենական եւ միջազգային բարձր պարգեւները, գիտական կոչումներն ու ակադեմիական մրցանակները, Ձեր անդամակցութիւնը բազում երկրների գիտութիւնների ակադեմիաներին: Անյոգնաբեկ ու նուիրեալ աշխատանքով արձանագրած Ձեր յաջողութիւնները ճանաչում են բերում մեր երկրին ու ժողովրդին:

Մենք քաջածանօթ ենք նաեւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հանդէպ Ձեր անկեղծ սիրուն ու նուիրումին: Գոհունակութիւն է

Մեզ համար, որ Դուք, Մեր հրաւէրին ընդառաջ, ստանձնեցիք Մայր Աթոռի «Սուրբ Ներսէս Մեծ» բժշկական կենտրոնի Տնօրէնների խորհրդի ատենապետի պաշտօնը եւ սիրով ու պատրաստակամութեամբ Ձեր կարողութիւններն ու հարուստ փորձառութիւնը ի սպաս էք բերում հաստատութեան գործունէութեանը:

Հայրենի մեր երկրին, սիրեցեալ մեր ժողովրդին եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին մատուցած Ձեր ծառայութեանց բարձր գնահատանքով Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Մայր Եկեղեցու

ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ - ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ

պատուոյ բարձր շքանշանը:

Ի խորոց սրտի Մեր աղօթքով Բարձրեալ Տիրոջ օրհնութիւնն ու զօրակցութիւնն ենք հայցում Ձեզ՝ յետայսու եւս շարունակելու Ձեր ծառայութիւնը մեր Հայրենիքին, հաւատաւոր ժողովրդին եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն:

Մեր մաղթանքն է նաեւ, որ Բարին Աստուած Իր Հայրական հովանու ներքոյ միշտ քաջառողջ ու երջանիկ պահի եւ պահպանի Ձեզ ու Ձեր ընտանեաց անդամներին՝ յարանորոգ յաջողութիւններ պարգեւելով Ձեր բոլոր գործերին ու ծրագրերին:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 31-ն Մայիսի
յամի Տեառն 2008 եւ ի թուին հայոց ՌՆԾԷ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 471